Հավելված 6
«ՀՀ ԱՄ ԹՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/162» ծածկագրով
Հրատապ բաց մրցույթի հրավերի

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԵՎ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N«ՀՀ ԱՄ ԹՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/162»

ք. Թալին «18» Դեկտեմբերի 2025թ.

Թալինի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Տավրոս Սաֆեյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՊՐՈՖ-ԷՔՍՊԵՐՏ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գրիգոր Կարապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի կարիքների համար ասֆալտապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների»** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:[1]

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.[2]

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

---

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:[3]

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:[4]

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է

www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **6972000 (վեց միլիոն ինը հարյուր յոթանասուներկու հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[5]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսերին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի ---ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[6]

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի

4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[7] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:[8]

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

**6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[9]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

---

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է

ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը[10]

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է **6/վեց** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **Թալինի համայնքապետարան** | **«ՊՐՈՖ-ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ** |
| **ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Թալին Գայի 1** | **ՀՀ ք.Աշտարակ,Տիգրան Մեծի 28շ27 բն.** |
| **Բանկ՝ ՖՆ Գործառնական վարչություն** | **Ինեկոբանկ ՓԲԸ** |
| **ՀՀ 900462151045** | **Հ/Հ 2050822014221001** |
| **ՀՎՀՀ 05030561** | **ՀՎՀՀ 05015431** |
| **Համայնքի ղեկավար՝ Տ.Սափեյան** | **Տնօրեն՝ Գ.Կարապետյան** |
| ------------------------------------ | ------------------------------------ |
| **(ստորագրություն)** | **(ստորագրություն)** |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |

---

10 *Եթե Պատվիրատուն հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պատվիրատու, ապա սույն կետը խմբագրվում է՝«վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական տալու» բառերով:*

Հավելված 1
« 18 » դեկտեմբեր 2025 թ. կնքված
«ՀՀ ԱՄ ԹՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/162» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | | հասցեն | Ժամկետը ** |
| 1 | 71241200/29 | ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի կարիքների համար ասֆալտապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման | դրամ | 6972000 | 6972000 | 1 | Զարինջա, Հացաշեն, Ն.Արթիկ, Սուսեր, Ցամաքասար, Մաստարա, Կաթնաղբյուր, Դավթաշեն, Դաշտադեմ, Գառնահովիտ, Ագարակավան, Ն.Բազմաբերդ, Արագածավան, Թաթուլ բնակավայրերում | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օր: |

| Տեխնիկական բնութագիրը/չափաբաժին 1/ | | |
|---|---|---|
| 1 | Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների անվանումները և հիմնանորոգման ենթակա տեղամասերը | ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Զարինջա, Հացաշեն, Ն.Արթիկ, Սուսեր, Ցամաքասար, Մաստարա, Կաթնաղբյուր, Դավթաշեն, Դաշտադեմ, Գառնահովիտ, Ագարակավան, Ն.Բազմաբերդ, Արագածավան, Թաթուլ բնակավայրերում ասֆալտապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման |
| 2 | Մատուցվող ծառայություններ | « նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ » |
| 3 | Տարածքների չափերը և նախատեսվող աշխատանքները | Զարինջա 250մ, Հացաշեն150մ, Ն.Արթիկ 365մ, Սուսեր 271մ, Ցամաքասար230մ, Մաստարա 400մ, Կաթնաղբյուր 990մ, Դավթաշեն 890մ, Դաշտադեմ 310մ, Գառնահովիտ 400մ, Ագարակավան 170մ,, Ն.Բազմաբերդ 440մ, Արագածավան 700մ, Թաթու 300մլ ասֆալտապատման աշխատանքներ |
| 4 | Հետազննման և նախագծի նկատմամբ պահանջներ | **Ինժեներաերկրաբանական հետազոտման եզրակացություն,** <br>• **Ինժեներաերկրաբանական հետազննումն իրականացնել ГОСТ-32868-2014-ի ստանդարտներով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերի համաձայն:** <br>• Ինժեներական հետազննման աշխատանքների իրականացում: <br>• Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում: <br>• Ճանապարհահատվածի սահմաններում գտնվող ստորգետնյա և վերգետնյա ինժեներական [illegible] գծերի |

| | | |
|---|---|---|
| | | ուսումնասիրություն, անհրաժեշտ տեխնիկական պայմանների ձեռք բերում և ճանապարհի ծրագծի իրականացմանը խոչընդոտելու, իսկ ստորգետնյա գծերի դեպքում նաև ոչ բարվոք վիճակում գտնվելու դեպքում այդ գծերի համար տալ նախագծային լուծում: Ինժեներական գծերի (նաև սարքավորումների) տեղափոխման անհրաժեշտության դեպքում դրանց տեղափոխման նախագծի մշակում և իրավասու կազմակերպությունների հետ համաձայնեցում:<br>• Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ հիմնանորոգվող տեղամասը հանձնման-ընդունման ակտի միջոցով կապալառու կազմակերպությանը հանձնում՝ տեղանքին ամրակցող նշաններով և բարձրությունների հենանիշերով:<br>• Ինժեներական հետազննումն իրականացնել ՀՀՇՆ I-2.01-99 շինարարական նորմերով և ГОСТ 32836-2014-ի, ГОСТ 33179-2014-ի ստանդարտներով սահմանված պահանջների համաձայն:<br>• Ինժեներաերկրաբանական հետազննումն իրականացնել ГОСТ 32868-2014-ի ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերի համաձայն:<br>• Տեղագրագեոդեզիական հետազննումն իրականացնել ГОСТ 32869-2014-ի և ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերին համաձայն:<br>• Նախագծային փաստաթղթերը մշակել ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ», ՀՀՇՆ 32-03.01-2024 «Կամուրջներ և խողովակներ», ՀՀՇՆ 32-03.02-2024 «Կամուրջների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում, Հիմնական դրույթներ» շինարարական նորմերերի, ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների համաձայն:<br>• Ճանապարհի կահավորումն իրականացնել ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի թիվ 113-Ն և 26"10"2006 թիվ 1699-Ն որոշումներով սահմանված կարգերի համաձայն:<br>• Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 17.10.2024թ.-ի թիվ 1656-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն:<br>Նախագծային փաստաթղթերի աշխատանքային գծագրերը մշակել ГОСТ 21.701-2013, ГОСТ 21.101-99, ГОСТ 21.501-2018 ստանդարտներով սահմանված կանոնների և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի համաձայն: |
| 5 | Նախագծի կազմի նկատմամբ պահանջները | Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը պետք է ներառեն՝<br>ա/Բացատրագիր<br>բ/Գծագրեր<br>գ/Նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը վճարները և հարկերը, կնիքված և ստորագրված նախագծողի կողմից<br>դ/Նախահաշիվ<br>ե/ծավալաթերթ<br>զ/չափագրություններ/տեղագրական հանույթ/<br>է/ ինժեներաերկրաբանական եզրակացություն (որն իր մեջ կներառի տեղեկատվություն՝ կլիմայի, ռելյեֆի, շրջանի սեյսմիկ և բնահողերի |

կարգի, ջրաբանությունը և ջրաերկրաբանությունը, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցված պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերի, օգտագործվող հանքանյութերի հանքերի տեղերի վերաբերյալ),

-Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաները, տեխնիկական միջոցները, աշխատանքային ռեսուրսները և մասնագիտական որակավորումները

-Նախագծով նախատեսված նյութերի և սարքավորումների երաշիքային ժամկետների ցանկ:

- ներկայացնել աշխատանքների կատարման պլանը

- **Ներկայացնել շինարարական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նվազագույն ժամկետը**

-Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ինժեներատեխնիկական անվտանգություն, վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ

1. Նախագծային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի/ փաստաթղթային ամբողջական փաթեթի ներկայացում՝ 4 օրինակ երկլեզու/առանձին կամ համատեղված հայերեն և ռուսերեն/
2. Նախահաշվի և ծավալաթերթի արժեքներով փաստաթղթերի ամբողջական փաթեթի ներկայացում՝ համապատասխանաբար 3 և 1 օրինակ:
3. Ընդ որում ծավալաթերթը ներկայացնել երկլեզու /առանձին հայերեն և առանձին ռուսերեն/
4. Նախագծանախահաշվային երկլեզու փաստաթղթերի Էլեկտրոնային փաթեթի ներկայացում՝ կրիչով, տեքստային և գծագրական նյութերը՝ PDF և DWG ֆորմատներով, նախահաշիվը և ծավալաթերթը նաև EXCEL տարբերակներով
5. *Էլեկտրոնային կրիչում ներառվող ֆայլերը պետք է ունենան պարունակությանը համարժեք անվանումներ, և զերծ լինեն կողմնակի ինֆորմացիայից:

**Նախագծերը, նախահաշիվները և ծավալաթերթերը պետք է ներկայացվեն վերը նշված օբյեկտների համար առանձին-առանձին**

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)

Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 30 օրացուցային օր, որից հետո Պատվիրատուի նախաձեռնությամբ կներկայացվի պարզ քաղաքաշինական փորձաքննության:

ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ

Ըստ անհրաժեշտության, եթե պատվիրատուի նախաձեռնությամբ իրականացվող քաղաքաշինական պարզ փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման», նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:

Աշխատանքների վճարումը կիրականացվի դրական փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո:

| | | |
|---|---|---|
| | | 12. Գումարը վճարվում է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության դրական եզրակացություն առկայության պարագայում: |
| 6 | Համաձայնեցումներ | • համայնքների վարչական սահմաններում առաջարկվող նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ,<br>• տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը,<br>կոմունիկացիաների (ջրագծի, գազատարի, կոյուղու, կապի մալուխի և այլն) տեղափոխում նախատեսելու դեպքում նախագիծը համաձայնեցնել իրավասու շահագրգիռ մարմինների հետ: |

| *Ծառայությունների մատուցման ժամկետը* | |
|---|---|
| *Սկիզբը* | *Ավարտը* |
| *Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից* | *Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30-րդ օրացուցային օրը ներառյալ:* |

* *Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

| | |
|---|---|
| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**<br>**Թալինի համայնքապետարան**<br>**ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Թալին Գայի 1**<br>**Բանկ՝ ՖՆ Գործառնական վարչություն**<br>**ՀՀ 900462151045**<br>**ՀՎՀՀ 05030561**<br>**Համայնքի ղեկավար՝ Տ.Սափեյան**<br>---------------------------------------<br>**(ստորագրություն)**<br>**Կ.Տ.** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**<br>**«ՊՐՈՖ-ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ**<br>**ՀՀ ք.Աշտարակ,Տիգրան Մեծի 28շ27 բն.**<br>**Ինեկոբանկ ՓԲԸ**<br>**Հ/Հ 2050822014221001**<br>**ՀՎՀՀ 05015431**<br>**Տնօրեն՝ Գ.Կարապետյան**<br>---------------------------------------<br>**(ստորագրություն)**<br>**Կ.Տ.** |

*Հավելված N 2*
*«18» դեկտեմբեր 2025 թ. կնքված*
*« ՀՀ ԱՄ ԹՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/162» ծածկագրով պայմանագրի*

*ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

*ՀՀ դրամ*

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | 2026 թ. |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը | 2026թ |
| 1 | 71241200 | ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Զարինջա, Հացաշեն, Ն.Արթիկ, Սուսեր, Ցամաքասար, Մաստարա, Կաթնաղբյուր, Դավթաշեն, Դաշտադեմ, Գառնահովիտ, Ագարակավան, Ն.Բազմաբերդ, Արագածավան, Թաթուլ բնակավայրերում ասֆալտապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման | | | | | | | | | | | | 6972000 | 6972000 | 6972000 |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
**Թալինի համայնքապետարան**
**ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Թալին Գայի 1**
**Բանկ՝ ՏՆ Գործառնական վարչություն**
**ՀՀ 900462151045**
**ՀՎՀՀ 05030561**
**Համայնքի ղեկավար՝ Տ.Սախիյան**

---------------------------------------
**(ստորագրություն)**
**Կ.Տ.**

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
**«ՊՐՈՖ-ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ**
**ՀՀ ք.Աշտարակ,Տիգրան Մեծի 28շ27 բն.**
**Ինեկոբանկ ՓԲԸ**
**Հ/Հ 205082204221001**
**ՀՎՀՀ 05015431**
**Տնօրեն՝ Գ.Կարապետյան**

---------------------------------------
**(ստորագրություն)**
**Կ.Տ.**

*Հավելված 3*
*« 18 » դեկտեմբեր 2025թ. կնքված*
*«ՀՀ ԱՄ ԹՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/162» ծածկագրով պայմանագրի*

| | |
|---|---|
| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
| «ՊՐՈՖ-ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ | Թալինի համայնքապետարան |
| ՀՀ ք.Աշտարակ,Տիգրան Մեծի 28շ. բն. | ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Թալին Գայի 1 |
| Ինեկոբանկ ՓԲԸ | Բանկ՝ ՖՆ Գործառնական վարչություն |
| Հ/Հ 2050822014221001 | ՀՀ 900462151045 |
| ՀՎՀՀ 05015431 | ՀՎՀՀ 05030561 |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » *2025 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Զարինջա, Հացաշեն, Ն.Արթիկ, Սուսեր, Ցամաքասար, Մաստարա, Կաթնաղբյուր, Դավթաշեն, Գառնահովիտ, Ագարակավան, Ն.Բազմաբերդ, Արագածավան, Թաթուլ բնակավայրերում ասֆալտապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 2025 թ.

Պայմանագրի համարը՝ *« ՀՀ ԱՄ ԹՀ-ՀԲՄԽԱԾՁԲ-25/162»*

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2025թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունը ընդունեց |
|---|---|
| ______________________ ստորագրություն | ______________________ ստորագրություն |
| ______________________ ազգանուն, անուն | ______________________ ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*« 18 » դեկտեմբեր 2025թ. կնքված*
***«ՀՀ ԱՄ ԹՀ-ՀԲՄԽԱԾՁԲ-25/162»** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Թալինի համայնքապետարն -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ ____________-ի

Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 2025թ. ____________________ -ին կնքված N ____________________

պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2025թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*« 18 » դեկտեմբեր 2025 թ. կնքված*
*«ՀՀ ԱՄ ԹՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/162» ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

_______________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ______________________-ի և ______________________-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«----------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

______________________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

______________________________________ ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.